

## **Քաղվածք**

### **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից**

**Երևան, 11 հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը հոկտեմբերի 11-ի նիստում քննարկեց դատախազ Կ. Խ.-ին արտահերթ կարգով դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությունը:

Հաշվի առնելով հարցազրույցի արդյունքները և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով, ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 12-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը

### **ՈՐՈՇԵՑ՝**

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Կ. Խ.-ին «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու համար: